

ԱՄԵՆԱՄՅԱ ԶԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԵԱ ԱԽՎԵԴԻԱՆԻ. «ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԱՄՐԱՊԵՂՈՒՄՆ Է»



Նոյեմբերի 18-ին, Վրաստանի խորհրդարանի լիագումար նիստում, կառավարության հաշվետվության շրջանակներում, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար Թեա Ախվեդիանին ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության կատարած աշխատանքների հաշվետվությունը:

համատեղ տարբեր միջոցառումների անցկացման հարցերի շուրջ:

Պետնախարարը մասնավորապես խոսեց ազգային փորձաքննությունների ներկայացուցիչների՝ երկրի սոցիալ-քաղաքական կյանքում ինտեգրման, միջնակարգային կապերի ամրապնդման,

վաստմամբ, միջնակարգային երկխոսությունը ծառայում է որպես ռազմավարական մեխանիզմ աջակցելու մշակութային բազմազանության խթան:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

COVID - 19

ՏԱԳՆԱՊԱՆԻ ԻՐԱՎԻՃԱԿ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅՈՎ ՎՐԱՍԱՆԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԶՈՐՐՈՐԴՆ Է, ԻՍԿ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ՝ ԵՐՐՈՐԴԸ

ՕԳՏՎԵՔ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԽՁՈՒՄՆԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՊԱՏՎԱՍՏՎԵՔ

Նոյեմբերի 16-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց երկրում գոյություն ունեցող համավարակային իրավիճակի եւ պատվաստումների խթանման միջոցառումների արդյունքում պատվաստումների գործընթացի ակտիվացումը:

Ինչպես հայտնի է, Զամակարգող խորհրդի որոշմամբ, Վրաստանի 60 եւ բարձր տարիքի յուրաքանչյուր քաղաքացուն, ով նույնիսկ պատվաստվելու է նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ, կտրվի միանվագ 200 լարի հավելավճար: Որոշումն ուժի մեջ է 2021 թվականի նոյեմ-

բերի 8-ից մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Զավելավճարը տրվում է առաջին պատվաստումից հետո:

Միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստում դրական է գնահատվել Եվրահանձ-

նաժողովի որոշումը, համաձայն որի՝ Վրաստանը միանում է Եվրամիության թվային կոմիտեի հավաստագրման համակարգին:

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)



«ՎՐԱՍԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է



Ի սրտե շնորհավորում են «Վրաստան» թերթի ողջ ստեղծագործական կազմին եւ, առաջին հերթին, իմ բարեկամ, թերթի անփոխարինելի խմբագիր, վաստակաշատ լրագրող, ճանաչված հասարակական եւ քաղաքական գործիչ Վան Բայբուրջյանին՝ թերթի մեկդարյա հրեյլանի առթիվ: Դժվար է տրված ձեռնագրով ներկայացնել ողջ այն պատմական-քաղաքական դերը, որը վրաց-հայկական համակցության գործում կատարում եւ կատարել է հրեյլանը պարբերականը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

Շնորհավոր 100-ամսավոր, ԻՍ «ՎՐԱՍԱՆ» եւ օտար երկիր գնացած մի մարդ Շատ մեծ կարոտով տուն վերադարձա, Կներես դու ինձ, որ ես ուշացա եվ քո հոբեյլանին չներ կայացա: Իմ փոքրիկ ու մեծ իմ լավ «Վրաստան», Դու կարծես ծեր ես, հարյուրն անցած, Բայց ինձ համար միշտ ջահել ես ու կաս Ու պիտի լինես մեր ազգի համար, Լեզու ու հավատ պահպանող մի սար, Դու անցել ես դժվարին ճամփա,



(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԲԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՏՈՐԱԳՐՈՒՄՆ Է»

Նոյեմբերի 17-ին, Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Ազգային ժողովի՝ կառավարության հետ հարցույթատասխանի ձեռնարկով նիստին հայտարարեց, որ ԵԱԶԿ Մինսկի խմբի համաձայնագրային շրջանակներում բանակցային գործընթացի ամբողջ նպատակը Ադրբեյջանի հետ խաղաղության պայմանագրի կնքմանը հասնելն է:



- Զայաստանն էլ Ադրբեյջանին է առաջարկել եւ առաջարկում է կնքել խաղաղության պայմանագիր: Սա նոր բան չէ: Մինչեւ այսօր էլ, մեզ միջ առաջ էլ գոյություն ունեցող բոլոր բանակցա-

յին փաթեթներում, բանակցային գործընթացի նպատակը խաղաղության պայմանագրի ստորագրումն է,- ասաց վարչապետը:

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՎՐԱՍԱՆ - ԲԱՅԱՍՏԱՆ

ՊԱՎԻԹ ԶԱԼԿԱԼԻԱՆԻ. «ՎՐԱՍԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԲՈԼՈՐ ԶԱՆՔԵՐԸ ԳՈՐԾԱՐԵԼ ՏԱՐԱԾՆԵՐԶԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՂՄԱՆ ՀԱՄԱՐ»

Նոյեմբերի 15-ին, Բյուրեյլում, Արեւելյան գործընկերության նախարարական հանդիպման շրջանակում, Վրաստանի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին հանդիպում է ունեցել Ադրբեյջանի եւ Զայաստանի իր գործընկերներ Տեյիուս Բայրամովի եւ Արարատ Միրզոյանի հետ:

Զանդիպմանը քննարկվել է տարածաշրջանում տիրող իրավիճակը, Վրաստանի փոխվարչապետը վերահաստատել է տարածաշրջանում կայունության ու խաղաղության ամրապնդման եւ հարեւան երկրների միջեւ լարված իրավիճակի դեակալացիայի կարեւորությունը:

Դավիթ Զալկալիանին վերահաստատել է վրացական կողմի պատրաստակամությունը՝ հետագայում ջանք չխնայելու, նպաստելու տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղության եւ կայունության ամրապնդման գործընթացին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԵՏԱՔՐՔՐՎԱԾ Է

«ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՆ» ՎՐԱՅԱԿԱՆ ՄՈՂԵԼՈՎ

Նոյեմբերի 16-ին, Զայաստանում Վրաստանի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Իրակլի Կվանչախաձեն հանդիպում ունեցավ Զայաստանի Արդարադատության նախարար Կարեն Անդրեասյանի հետ:

Զանդիպմանը քննարկվեցին Զայաստանում վրացական մոդելով հանրային ծառայություններ մատուցող «Արդարադատության տներ» կառուցելու նպատակով փորձի ու տեղեկության փոխանակման հնարավորություններն ու այս ոլորտում համագործակցությունը խորացնելուն վերաբերող մի շարք այլ հարցեր:



Զանդիպմանը ներկայացնելով նախարարության բարեփոխումների օրակարգը, Կարեն Անդրեասյանը հատկապես շեշտեց երկու ուղղություններով վրացի գործընկերների հետ փորձի փոխանակման անհրաժեշտությունը: Դրանք վերաբերել են Զարկալի կատարումն ապահովող ծառայության կարողությունների զարգացմանն ու քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում համագործակցությանը:

Զանդիպման ավարտին, կողմերը համագործակցությունը խորացնելու պայմանավորվածություն են ձեռք բերել:

Մինչ այդ, Զայաստանում Վրաստանի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Իրակլի Կվանչախաձեն հանդիպում ունեցավ Զայաստանի Արտակարգ իրավիճակների նախարար Անդրանիկ Փիլոյանի հետ: Զանդիպմանը քննարկվեցին երկկողմ համագործակցությանն առնչվող հարցեր:

ԳՈՐԾԱՐԻ

ՆԵՐՂՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ՝ ՆՈՐ ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐԵՐԻ ՈՒ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՆԱԵՎ ՍԱՄՇՎԻԼՂԵՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլին, տնտեսական խմբի ներկայացուցիչների հետ աշխատանքային խորհրդակցությունում, քննարկեց նոր հանգստավայրերի ու զբոսաշրջության վայրերի ներդրումային նախագծերը:



Վրաստանի վարչապետ Իրակլի Գաբրիաշվիլին հանձնարարությամբ նոր ներդրումային նախագծերի վրա աշխատանքները շարունակվում են:

Ներդրողների համար նախապատրաստվել են նախագծեր, որոնք ներառում են երկրի միջազգային օդանավակայաններում լոգիստիկ կենտրոնների, նավահանգստային ենթակառուցվածքների, բեռների տեղափոխման գարաջում: Աշխատանքներ են տարվում նաև տարբեր ոլորտներում խոշոր նախագծերի վրա, այդ թվում՝ մեքենաշինության և ինտերնետ-տեխնոլոգիաների:

Վրաստանի վարչապետի հանձնարարությամբ էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունը նոր խոշոր ներդրումային նախագծեր է պատրաստել՝ ուղղված Վրաստանում նոր հանգստավայրերի և զբոսաշրջային վայրերի ստեղծմանը:

Վարչապետի գլխավորությամբ աշխատանքային հանդիպմանը քննարկվեցին շուրջ 40 ներդրումային առաջարկներ, որոնք ներառում են զբոսաշրջային նոր օբյեկտների զարգացում ամբողջ երկրում, ինչպես նաև արդյունաբերական և լոգիստիկ նախագծեր: Քննարկված առաջարկներից առաջիկայում կընտրվեն ներդրումային առումով ամենագրավիչները և կսկսվեն դրանց նախագծման աշխատանքները:

Աշխատանքային հանդիպմանը նշվեց, որ բացահայտվել են բոլոր այն մարզերը, որտեղ առկա է զբոսաշրջային գրավչության նոր կենտրոնների զարգացման ներուժը: Օրինակ՝ նշվեց Թեթրիժարոյի մունիցիպալիտետի Սանձվիլդեում զբոսաշրջային ենթակառուցվածքների կազմակերպումը, ինչպես նաև Քվեմո Սվանեթի, Ռաճա-Լեչխումի մարզերում նոր հանգստավայրի ստեղծումը և երկրի մշակութային ժառանգության հուշարձանների շրջակայքում նոր զբոսաշրջային ծա-

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱՎԱ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԵՍ Է ԳԱԼԻՍ ԴԵՂԵՐԻ ԳՆԵՐԻ ԿԱՐԳՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ»



Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, անդրադառնալով առաջին սպառման ապրանքների գների ավելացման հարցին, հայտարարեց, որ գնաճը խնդիր է, և իշխանությունը մշտապես գործում է այդ խնդրի կարգավորման ուղղությամբ:

Նրա խոսքով, Վրաստանում գնաճի խնդիրն առաջին հերթին պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով: - Եթե մայրենք աշխարհում գնաճի մակարդակին, ապա այն գլոբալ բնույթ է կրում, այդուհանդերձ, սա շատ ցավալի է մեր բնակչության համար, և դա է պատճառը, որ նախաձեռնել ենք դեղերի գների կարգավորում, որի ուղղությամբ ակտիվ աշխատում ենք: Ինչ վերաբերում է աղքատության մակարդակին, ապա դեռ 2005, 2006 և 2007 թվականներին, երբ տնտեսությունը բավական բարձր տեմպերով էր աճում, իսկ 2007-ին երկնիչ աճ

կար, աղքատությունը հասավ գրեթե 39-49 տոկոսի: Մինչդեռ 2018, 2019 և 2020 թվականներին, չնայած համավարակին, աղքատության մակարդակը կազմեց 19-20-21 տոկոս: Մենք տնտեսական աճ ունենք ու, կարծում ենք, այդ աճի շնորհիվ պետք է հաղթահարենք նաև աղքատությունը: Աճող տնտեսությունից մենք ավելի շատ հարկեր հավաքելու շնորհիվ, բյուջեից ավելի շատ սոցիալական կամ բիզնես նախագծերի ֆինանսավորում կհաջողեցնենք: Մենք հետևողական ենք այս հարցում և գործում ենք խնդիրները վերացնելու ուղղությամբ,- հայտարարեց Նաթիա Թուրնավան:

ԱՐԴԱՐԱՑՎԱԾ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒԲԵՆ ԿԱՐՎԵՏՅԱՆԸ ԿՐԿԻՆ ԶԲԱՂԵՑՐԵՑ ԱՆԱԼՑԻՒՄԵՆԻ ՓՈԽՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԸ

Ախալցխի մունիցիպալիտետի նորընտիր քաղաքապետ Իրակլի Լազարաշվիլին՝ Ռուբեն Կարավետյանին վերահաստատեց փոխքաղաքապետի պաշտոնում:

Մասնագիտությամբ իրավաբան և հանրային ծառայությունում երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող Ռուբեն Կարավետյանը փոխքաղաքապետի պաշտոնը զբաղեցնում էր 2016 թվականից:

Մունիցիպալիտետի առաջին փոխքաղաքապետի պաշտոնը զբաղեցրեց մասնագիտությամբ տնտեսագետ, հանրային

ծառայության բազմակուսակա աշխատակից Իլիա Զարոյանի: Փոխքաղաքապետի թվում է նաև մասնագիտությամբ տնտեսագետ, մինչ այդ «Ախալցխի սերվիս խմբի» ղեկավար Վաթա Գաչեչիլաձեն:



ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ը ՀԱՆՂՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄՆԵՐԻ ՕՐ

ՄԱՐԻ ՄԻԿՈՅԱՆԸ՝ ՀԱՆՂՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՃԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ

Նոյեմբերի 16-ին Հանդուրժողականության միջազգային օրը, Վրաստանի ժողովրդական պաշտպանը և ժողովրդական պաշտպանին առընթեր գործող հանդուրժողականության կենտրոնը՝ ի նշանավորումն միջազգային օրվա, անցկացրեց միջոցառում, որի ընթացքում միջոցառման մասնակիցներին բաժանվեցին Վրաստանում ազգային և կրոնական բազմերանգության հարցերով մշակված գրքերը և կայացավ հանդուրժողականության աջակիցների պարզեւատրման ավանդական արարողությունը:

Բացելով միջոցառումը, Վրաստանի ժողովրդական պաշտպան Նինո Լոնջարիան նշեց, որ ընթացիկ տարին աչքի ընկավ ինչպես քաղաքական հարուստ իրադարձություններով, այնպես էլ՝ մարդու իրավունքների պաշտպանության, այդ թվում՝ փոքրամասնությունների նկատմամբ առկա հանդուրժողականության կամ խտրականության տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանության գործունեությունը ևս խաթարում է կորոնավիրուսի համավարակը և դրա ազդեցությունն առանձին խմբերի իրավունքների վրա,- հայտարարեց Նինո Լոնջարիան:

Հանդուրժողականության կենտրոնի գործունեության, երկրում հանդուրժողականության մշակույթի նշանակության մասին խոսեց ժողովրդական պաշտպանին առընթեր գործող ազգային փոքրամասնությունների խորհրդի հա-


մակարդող Կոբա Զոփիլանին: Ազգային և կենտրոնական բազմերանգության մասին մշակված և այդ թեմաներով իրատարակած գրքերը ներկայացրեցին և բազմերանգության հետ կապված հարցերի շուրջ խոսեցին գրքերի խմբագիրներ Լավրենտի Զանիաշվիլին և Սոփիո Զվիադաձեն:

Հանդուրժողականության աջակցի տարբեր անվանակարգերում, ազգային փոքրամասնության խորհրդի կողմից մրցանակների արժանացան անհատական անվանակարգում բժիշկ, ոչ կառավարական «Generation» կազմակերպության ղեկավար, Վիրահայոց թեմի ակտիվիստ Մարի Միկոյանը: Հանրային պաշտոնյայի անվանակարգում Վրաստանի խորհրդարանի անդամ Տարիել Նակաիձեն, ժողովրդական պաշտպանին առընթեր ազգային փոքրամասնությունների խորհրդի վաստակավոր անդամ-

ների անվանակարգում՝ մանկավարժ և եզդիների համայնքի ակտիվիստ Լիլի Սաֆարովան, պրոֆեսոր, «Լեա» միջազգային հիմնադրամի և «Եզդի կամանգ միության» ղեկավար Մարինա Սոլոմանաշվիլին: Կրոնական խորհրդի կողմից անհատական անվանակարգում հանդուրժողականության աջակցի մրցանակը տրվեց Վրաստանում Իսրայելի արտակարգ և լիազոր դեսպան Ռոմ Գիդորին, կազմակերպության անվանակարգում՝ Աջարիայի տարածաշրջանում գործող հանդուրժողականության կազմակերպությանը, քաղաքագետ-հանրային պաշտոնյայի անվանակարգում՝ Վրաստանի խորհրդարանի անդամ Տարիել Նակաիձեն:

Նշենք, որ Հանդուրժողականության միջազգային օրը ՄԱԿ-ը նշում է 1996 թվականից:

ԱՐԵՎԻԿԱ ՍԱՆՈՒԿՅԱՆ



ՈՒԿՐԱԻՆԱ

80 ՏՈՆՆԱ ԶԻՆԱՄԹԵՐՔ ԱՄՆ-ԻՑ

Ուկրաինան Ամերիկայի Միացյալ Նահանգներից շուրջ 80 տոննա զինամթերք է ստացել: Կիևում ԱՄՆ-ի դեսպանության տեղեկատվությամբ, դա ԱՄՆ-ի չորրորդ մատակարարումն է 60 միլիոն դոլարի չափով լրացուցիչ օգնության շրջանակներում, որը նախագահ Ջո Բայդենը Ուկրաինային է ուղարկել օգոստոս ամսին:

Ավելի վաղ հաղորդվել է, որ Ուկրաինայի և ԱՄՆ-ի միջև նոր խարտիա է ստորագրել երկրների միջև ռազմավարական գործընկերության շուրջ:

ԻՐԱՆ

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԸ ԿԱՆՎԱԾ Է ԱՄՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Իրանի ԱԳ նախարարության հայտարարությամբ, Վիեննայում միջուկային գործարքին վերադառնալու առաջիկա բանակցությունների հաջողությունը կախված է Թեհրանի նկատմամբ ավելի վաղ սահմանված պատժամիջոցները չեղարկելու՝ ԱՄՆ-ի պատրաստակամությունից:

Նշենք, որ իրանական միջուկային ծրագրի շուրջը գործողությունների համատեղ համապարփակ պլանը «Հինգ գումարած մեկ» խմբի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Չինաստան, ԱՄՆ և Ֆրանսիա) շքանակներում ստորագրվել էր 2015 թվականին: 2018 թվականին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը միակողմանի կարգով դուրս եկավ պայմանագրից: Նրա հաջորդ Ջո Բայդենը բազմիցս պատրաստակամություն է հայտնել վերսկսելու գործարքի շուրջ ԱՄՆ-ի հանձնառությունների կատարումը:

ԵՎՐԱՍԻՈՒԹՅՈՒՆ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՌԵԿՈՐԴՆԵՐ

Եվրոպայում գազի գինը սակարկությունների ժամանակ հոկտեմբերի 27-ից ի վեր առաջին անգամ բարձրացել է հազար խորանարդ մետրի դիմաց 1 000 դոլարից:

Գների աճի պատճառ կարող էր դառնալ Նորվեգիայից եվրոպային գազի մատակարարման նոմինացիաների իջեցումը: Բացի դրանից, նախօրյակին աճուրդի ժամանակ «Գազպրոմը» ղեկավարների համար չի ամրագրել Ուկրաինայի տարածքով բնական գազի տարանցման լրացուցիչ կարողություններ և Լեհաստանի տարածքով գազի մղման կարողություններ Յանալ-Եվրոպա գազատարով:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՄԱՇԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԸ ԱԶԱԿՈՒՄ Ե ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՐԵՓՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

Նոյեմբերի 17-ին Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին հանդիպում ունեցավ Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում Համաշխարհային բանկի փոխնախագահ Աննա Բիերդեի հետ:


Հանդիպմանը կողմերը քննարկեցին Համաշխարհային բանկի եւ Վրաստանի միջեւ համագործակցության հարցեր: Նշվեց, որ այս հարաբերություններն արդյունավետորեն զարգանում են՝ չնայած համաշխարհային համաճարակի հետեւանքով առաջացած մարտահրավերներին:

Հանդիպմանը ֆինանսների նախարարը եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց Համաշխարհային բանկի փոխնախագահին Covid-19-ի դեմ պայքարում Համաշխարհային բանկի կողմից ցուցաբերվող նշանակալի օգնության,

ինչպես նաեւ այն աջակցության համար, որը Համաշխարհային բանկը ցուցաբերում է երկրին բարեփոխումների իրականացման գործում:

Լաշա Խուցիշվիլին Աննա Բիերդեին ներկայացրեց տնտեսական վերականգնման դրական դինամիկան եւ 2022 թվականի բյուջեի հիմնական պարամետրերը:

Իր հերթին, Համաշխարհային բանկի փոխնախագահը վերահաստատեց Համաշխարհային բանկի պատրաստակամությունը՝ շարունակելու իր լիակատար աջակցությունը այն պահի հիմնական բարեփոխումների իրականացմանը, ինչպիսիք են մարդկային կապիտալի զարգացումը եւ ձեւավորումը, պետական ձեռնարկությունների բարեփոխումները, կանաչ եւ թվային տնտեսության վերականգնումը:



ԶՈՒՐԱԲ ԶԱՓԱՐԻՉԵՒ ԵՎ ՄԱՍՈՒԿԱ ԽԱՋԱՐԱԶԵՒ ՊԱՏՊԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՂԱԿԱՐԵՑՎԵՑ

Զուրաբ Չափարիձեի եւ Մամուկա Խազարաձեի պատգամավորական իրավասությունը դադարեցվել է: Որոշումն ընդունվեց խորհրդարանի լիազմար միատուն:

Զուրաբ Չափարիձեի պատգամավորական մանդատի դադարեցմանը կողմ է եղել 79 պատգամավոր, Մամուկա Խազարաձեի դեպքում եւս՝ 79 պատգամավոր, երկուսը դեմ են եղել: Մամուկա Խազարաձեի եւ Զուրաբ Չափարիձեի իրենք են հրաժարվել մանդատներից:

ԱՎԱՏՐԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԿԹԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ Ե ՍԿՍԵԼ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Օրերս Վրաստանի նավթի եւ գազի պետական գործակալությունը համաձայնագիր է ստորագրելու ավստրիական նավթագազային OMV ընկերության հետ արտադրանքի գործնական բաշխման վերաբերյալ:

Ավստրիական PETROM S.A-ն 2021 թվականին հաղթեց Վրաստանի ափերին Սեւ ծովի ընդերքում նավթի որոնման մրցույթը: Ընկերությունը համդիսանում է ավստրիական OMV (Osterreichische Mineralolverwaltung Aktiengesellschaft) հողհնգի բաղկացուցիչ մասը, որը հիմնվել է 1956 թվականին: Այն նավթի եւ գազի որոնումների իր հզորությամբ երկրորդ ընկերությունն է Ավստրիայում եւ տասներորդը՝ Եվրոպայում:

Նշենք, որ նավթի որոնումների աշխատանք են իրականացնում եւս յոթ ընկերություններ: Տարեկան միջինը վերջին տասը տարիների ընթացքում կազմել է 43,6 հազար տոննա նավթ:

ԿՐԹԱԿԱՆ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻՆ ԷԻՆ



Նոյեմբերի 16-ին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Միխեիլ Չխենկելին հանդիպում ունեցավ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նոր ներկայացուցիչ Նիկ Բերեսֆորդի հետ: Հանդիպմանը քննարկվեցին մասնագիտական կրթության ոլորտում համագործակցության խորացման հարցեր:

Միխեիլ Չխենկելին շնորհակալություն հայտնեց Նիկ Բերեսֆորդին Վրաստանի կրթական համակարգի բոլոր մակարդակներում երկար տարիների արդյունավետ համագործակցության եւ աջակցության համար: Նախարարը հատկապես կարեւորեց մասնագիտական կրթությունը եւ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նոր ներկայացուցիչին ներկայացրեց այս ուղղությամբ իրականացվող բարեփոխումները:

Ըստ նախարարի, Վրաստանը կարողացել է ներդրել կառավարման աննախադեպ եւ լիովին նորարարական մոդելը: Մասնագիտական հմտությունների գործակալությունը ստեղծվել է մասնավոր-պետական համագործակցությամբ, ինչը բոլորովին նոր խոսք է մասնագիտական կրթության արդյունավետ կառավարման տեսանկյունից: Գործակալությունը կնպաստի շուկայի պահանջներին համապատասխան ոլորտի զարգացմանը եւ համակարգված ու կազմակերպված կդարձնի մասնավոր եւ պետական հատվածների համագործակցությունը:

Իր հերթին, Նիկ Բերեսֆորդը բարձր գնահատեց մասնագիտական կրթության կառավարման այս մոդելը, եւ ընդգծեց գործատուների ներգրավվածության կարեւորությունը շուկայի պահանջներին համապատասխան հմտություններ ունեցող անձնակազմի վերապատրաստման գործում: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի նոր ներկայացուցիչը պատրաստակամություն հայտնեց աջակցել Վրաստանին այդ հարցում:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՍԱԼՈՍԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԵՐԵ ՀԱՄԱՉԱՅՆՎԵՆՔ, ՈՐ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱԶԸ ԳԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼ, ԱՊԱ ՊԵՏՔ Ե ՀԱՄԱՉԱՅՆՎԵԼ ՆԱԵՎ, ՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՎՏԱՆՁՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՆՐԱ ՏԵՂԱՓՈՒՍՈՒՄԸ ԳԺՎԱՐ Ե ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ»



Նոյեմբերի 17-ին, Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հացադուլի կապակցությամբ ստեղծված իրավիճակի հարցով Վրաստանի նախագահ Սալոսե Զուրաբիշվիլին հանդես եկավ հատուկ հայտարարությամբ:

Ըստ Սալոսե Զուրաբիշվիլու, օրենքի առաջ բոլորը հավասար են, եւ, հետեւաբար, նախկին նախագահի կալանավորումը թիւում է օրենքի գերակայության սկզբունքներից: Գիտակցելով այդ հանգամանքը, Միխեիլ Սաակաշվիլին, այդուհանդերձ, ժամանել է Վրաստան, այն էլ՝ ապօրինի, եւ եթե համաձայնեմք, որ նախկին նախագահը սովորական բանտարկյալ չէ եւ չի կարող լինել, պապ պետք է համաձայնել նաեւ այն հարցի շուրջ, որ վերջինիս տեղափոխությունը քաղաքացիական տարածք, այս պարագայում նշյալ բազմաֆունկցիոնալ կլինիկա, հղի է բազմաթիվ վտանգներով:

Միաժամանակ, նախկին նախագահը, պետք է օգուտի միջազգային անձնաբարձր չափանիշներից: Հստակեցվի, թե նրա առողջական վիճակի վատթարացումը կապված է հացադուլի ընթացքի, թե արձանագրվել է ոչ պակաս վտանգավոր փուլում, այսինքն՝ դադարից հետո: Ուստի, օբյեկտիվ պահանջները պետք է հստակեցվեն նաեւ այս ուղղությամբ: Պետք է պարզ լինի նաեւ, թե ի՞նչ չափանիշներ են պահանջվում արտերկրում քրեակատարողական համակարգի կլինիկաներին հետեւելու համար, որտեղ բուժվում են հացադուլավոր բանտարկյալները, այսինքն՝ այն բժշկական սարքավորումների ցանկը, որով պետք է համալրի հաստատությունը, որտեղ բանտարկյալը կշարունակի բուժումը, - ասել է Սալոսե Զուրաբիշվիլին՝ հավելելով, որ կառավարությունը պարտավոր է հանրությանը տեղեկացնել, թե, արդյոք, գոյություն ունեցող հաստատությունը համապատասխանում է այդ չափանիշներին, թե ոչ:

ԻՐԱԿԻ ԿՈՐԱՍԻՅԵ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Ե, ԵՎ ԱՆԿԱՆ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՊԱՏԺՎԵՆ»

«Վրացական երազանք» կուսակցության նախագահ Իրակլի Կոբախիձեն, անդրադառնալով Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հացադուլի շուրջ իրադարձություններին, նշեց, որ վրացական քաղաքական համակարգի հիմնախնդիրներից մեկը արդարադատության քաղաքականացման փորձն է:



- Հենց դրան է ուղղված ընդդիմության ծայրահեղ հատվածի եւ նրան հարող լրատվամիջոցների ու ոչ կառավարական կազմակերպությունների եւ օտարերկրյա լոբբիստների ջանքերը: Հենց քաղաքական կարգավիճակ ունեցող այդ ուժերի կողմից արդարադատությունը քաղաքականացնելու ամենավառ օրինակը 2020-21 թվականներին երեք հանցագործներին՝ Գիգի Ուգուլավային, Նիկանոր Մելիային եւ Գիորգի Ռուռուային պաշտպանելու միտումն էր: Եվ ահա այսօր բոլորը տեսնում են, որ այդ հանցագործները, ամենագլխավոր հանցագործ Միխեիլ Սաակաշվիլու հետ, ամենասակտիվ են քաղաքական իրավիճակի սրման հարցում, ինչը լուրջ վնաս է հասցնում վրաց պետականությանն ու հասարակական շահերին: Դրա համար, պատասխանատվությունը, ծայրահեղ ընդդիմության հետ միասին, դրվում է նաեւ այն անձանց վրա, ովքեր պահանջում են քրեականների անհապաղ ազատ արձակումը, - հայտարարեց Իրակլի Կոբախիձեն:

Էջը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԳՆԱՀԱՏՎԵԼ Ե ԿԱՅՈՒՆ

Նոյեմբերի 18-ին Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու փաստաբանների կողմից տարածվեց հաղորդագրություն, ըստ որի՝ արդեն 50-ոչ օրը հացադուլ հայտարարած նախկին նախագահի առողջական վիճակը վատթարացել է:

Վրաստանի հատուկ քրեակատարողական ծառայության տարածած հաղորդագրության համաձայն, Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու առողջական վիճակը, ով բանտային հիվանդանոցում կորցրել էր գիտակցությունը եւ՝ վայր ընկել, կայուն է:

Նշենք, որ մինչ այդ նախկին նախագահի առողջական վիճակը ստուգել էր Վրաստանի ժողովրդական պաշտպան Նիկո Լոնջարիայի նախաձեռնությամբ ստեղծված բժշկական խումբը: Ստուգումից հետո, բժիշկները հանդես եկան հատուկ հայտարարությամբ, որտեղ գնահատելով բանտային հիվանդանոցի՝ հատուկ սարքավորումներով ու անձնակազմով հագեցման փաստը, միաժամանակ, ելնելով հիվանդի վիճակի ծանրությունից, խորհուրդ էր տրվում անհապաղ բուժումը շարունակել ֆունկցիոնալ եւ փորձառու պոլիպրոֆիլակտիկ հիվանդանոցում, մասնավորապես՝ վերակենդանացման բաժանմունքում, որի պայմանները թիվ 18 հիմնարկի կլինիկան չէր բավարարում:

ԱՄԵՆԱՄՅԱ ՐԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԵԱ ԱԽՎԵԴԻԱՆԻ. «ՄԵՐ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՉԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴՊՐԿՄԱՆ ԱՄՐԱՂՆԴՈՒՄՆ Է»

(Սկզբը՝ 1-ին էջում)

մանն ու զարգացմանը, համատեղ կրթական, սպորտային եւ մշակութային գործունեության խթանմանը:

- Հավասարության, քաղաքացիական եւ քաղաքական մասնակցության ռազմավարական առաջնահերթության շրջանակներում քայլեր են ձեռնարկվել ազգային փոքրամասնությունների սոցիալ-քաղաքական ընդգրկման ամրապնդման ուղղությամբ, որը կենտրոնանալու է ավելի բարձր չափանիշների վրա եւ կբավարարի ընթացիկ կարիքները, ներառյալ՝ հավասար ընտրական միջավայրի գարգացումը եւ առկա խորհրդատվական մեխանիզմների ուժեղացումը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու տեղեկատվության եւ լրատվամիջոցների հասանելիության բարելավմանը, այդպիսով պայքարելով ազգային փոքրամասնությունների մասին ապատեղեկատվության դեմ եւ խթանելով քաղաքացիական ակտիվությունը եւ հաղորդակցությունը ազգային տարբեր պատկանելության մեր համաքաղաքացիների միջև:

Սոցիալական եւ տնտեսական ինտեգրման առաջնահերթությանը հասնելու ռազ-

մավարությունն ուղղված է ազգային բազմազան հասարակության յուրաքանչյուր անդամի բարեկեցությանը եւ սոցիալական հավասարությանը, կենսապայմանների բարելավմանը, տնտեսական ներգրավվածությանը նպաստող միջավայրի ստեղծմանը, պետական ծրագրերին եւ ծառայություններին հասանելիության բարձրացմանը, վերապատրաստման եւ մասնագիտական կրթության հասանելիությանը: - հայտարարեց պետնախարարը:

Թեա Ախվեդիանին մասնավորապես նշեց, որ հատուկ ուշադրություն է դարձվելու կանանց եւ երիտասարդներին աջակցությանն եւ հզորացմանը:

- Ինչպես գիտեք, քաղաքացիական ինտեգրումը դիմանիկ եւ բազմաչափ գործընթաց է, որը ոչ միայն հաշվի է առնում ազգային փոքրամասնություններին ուղղված գործընթացները, այլև պահանջում է հասարակության յուրաքանչյուր անդամի թե՛ փոքրամասնության, թե՛ մեծամասնության լիարժեք մասնակցությունը, պատշաճ շարժառիթն ու ջանքերը: Ծրագրված նպատակներին հասնելը կառավարության ջանքերով պահանջում է արդյունավետ աջակցություն եւ խրախուսվում հանրության կողմից, մենք ռազմավարու-

թյան արդյունավետությունը տեսնում ենք նման հարթության վրա, եւ մեծ հույսեր կապում այս ուղղությամբ հասարակության համախմբման ուղղությամբ,- ընդգծեց Թեա Ախվեդիանին:

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարը, իր հաշվետվության մեջ անդրադարձավ նաեւ երկրի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակին, նշելով, որ անգամ համաճարակային պայմաններում շարունակվել են բռնազավթիչ ռեժիմի ապակառուցողական գործողությունները, ներառյալ՝ «սահմանազատում» եւ Վրաստանի քաղաքացիների ապօրինի ձերբակալությունները, որոնք ոչ միայն սահմանափակում են ազատ տեղաշարժը, այլ որոշ դեպքերում վտանգում են քաղաքացիների առողջությունն ու կյանքը:

- Իմ այսօրվա զեկույցը վերաբերում է պետական նախարար մշակակվելու փաստացի մեկ տարվա ժամանակահատվածին, որը, ինչպես գիտեք, եղել է ներքին, տարածաշրջանային եւ միջազգային խոշոր զարգացումների ֆոնին՝ աննախադեպ գլոբալ համաճարակ, հատկապես բռնազավթված տարածքների բնակչության համար: Ներկայիս ռուսական բռնազավթ-

ման եւ ուղեկցվող անօրինական գործընթացների հետեւանքով ստեղծված առանց այն էլ սարսափելի հունամիտար եւ իրավական իրավիճակը, որը պայմանավորված է դե-ֆակտո անբախտիչ ուղղությամբ ակտիվ քայլերով, Գալիի եւ Ախալգորիի բնակչության էթնիկ խտրականությամբ, ազատ տեղաշարժի սահմանափակմամբ, մայրենի լեզվով կրթություն ստանալու հանգամանքով, է՛լ ավելի սրվեց համավարակի ընթացքում: Աբխազիայի եւ Ցխին-վալիի շրջանի՝ ռուսական բռնազավթիչ ռեժիմի մեր երկու անբաժան մասերի արհեստական մեկուսացմամբ, Ախալգորիի շրջանը հայտնվեց հատկապես անմխիթար վիճակում, որտեղ հունամիտար ճգնաժամը, ցավոք, խլեց բազմաթիվ մարդկանց առողջությունն ու կյանքը,- ասաց Թեա Ախվեդիանին:

Հանդիպման ավարտին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարարը պատասխանեց պատգամավորների հարցերին:

Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարարության մամլո ծառայություն - «Վրաստան»

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

ԹԲԻԼԻՍԻՆ՝ ԿՐԵԱՏԻՎ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԱՆՂԱՄ

Նոյեմբերի 17-ին, Թբիլիսիի կառավարության նիստի ընթացքում, մայրաքաղաքի քաղաքապետ Կախա Կալաձեն հայտնեց, որ Թբիլիսին դարձել է «Creative Cities Network»-ի անդամ:

Խոսելով մշակութային նորությունների, այդ թվում՝ մշակույթի ոլորտում Թբիլիսիի միջազգային կարգավիճակի մասին, Կախա Կալաձեն նշեց.


- Նախ շնորհավորում եմ բոլորին, որ Թբիլիսին մշակույթի ոլորտում ձեռք է բերել հերթական միջազգային կարգավիճակն ու ՅՈՒՆԵՍԿՕ-ին ներկայացված հայտի քննարկման արդյունքում դարձել «Creative Cities Network»-ի անդամ: Այս կարգավիճակը նախատեսում է մեդիա արվեստի զարգացում եւ առաջիկա չորս տարիների ընթացքում միանվագ կամ երկարաժամկետ նախագծերի իրականացում, ինչը նպաստում է ոլորտի զարգացմանն ու մասսայականացմանը: Նոյեմբերի 10-ին պաշտոնապես բացվել է նաեւ Թբիլիսիի քաղաքապետարանի հիմնադրած Թբիլիսիի միջազգային թատերական փառատոնը, որի շրջանակներում, հանդիսատեսը կծանոթանա նրա գեղարվեստական ինստալյացիային՝ «Ոչ մի անգամ» ֆիլմին,- ասաց Կախա Կալաձեն:

ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՒՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱՎԱՐԳԸ ԿՊԱՐՁԵՑՎԻ

Անդրադառնալով Թբիլիսիում անհատական տների շինարարության թեմային, քաղաքապետ Կախա Կալաձեն հայտարարեց, որ սեփական տների կառուցման թույլտվություն ունեցողների համար շինարարության ընթացակարգերը կպարզեցվեն:

Նրա խոսքով, փուլային արձանագրություններ ներկայացնելու պարտավորությունը հանվել է, իսկ արդեն թույլտվություն ունեցող, բայց տուգանված քաղաքացիներից, հանվել է չվճարված տուգանքը:

ՀԻՇՆԱՏԱԿԻ ԽՈՍՔ



Թբիլիսիի Իվանե Ջավախիձիլու անվան պետհամալսարանի շրջանավարտ էդուարդ Գասպարովը մասնագիտական կոփման գործնական դպրոցն անցավ անցյալ դարի 70-80-ական թվականներին, այն ժա-



- Խորհրդարանը երրորդ ընթերցմամբ ընդունեց օրենսդրական փոփոխությունը, որը պարզեցնում է սեփական տների կառուցման ընթացակարգերը: Մասնավորապես, հանվել է փուլային արձանագրություններ ներկայացնելու պարտավորությունը: Ինչ վերաբերում է ոչ սեփական բնակարաններին, ապա թույլտվություն ունեցողներն ազատվել են փուլային արձանագրություններ չներկայացնելու պատասխանատվությունից՝ մինչեւ 2022 թվականի հունվարի 1-ը, սակայն նրանք պարտավոր են ներկայացնել փուլային արձանագրություններ եւ անհրաժեշտության դեպքում՝ եզրակացություններ,- ասաց քաղաքապետը, եւ հավելեց, որ նշված օրենսդրական փոփոխությունը կնվազեցնի բյուրոկրատական ընթացակարգերն ու ֆինանսական ծախսերը, սակայն դա չի նշանակում, որ շինարարության ընթացքի նկատմամբ վերահսկողությունը կթուլանա:

- Շինարարության թույլտվություն ունեցող անձը, տան շինարարության ավարտից հետո, պետք է շահագործման հանձնելու դիմումին կցի օբյեկտի թույլտվության պայմաններին համապատասխանության գնահատումը: Փոփոխությունների նպատակը քաղաքացիների համար բյուրոկրատական ընթացակարգերի կրճատումն է, ինչ-

պես նաեւ ֆինանսական ծախսերից խուսափումը,- հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետը:

ԲԱԺԱՆՈՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՍՎԱՐԳ ԹԲԻԼԻՍԻԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ

Թբիլիսիի հասարակական տրանսպորտում հաջորդ տարվանից կգործարկվի բաժանորդագրման համակարգ: Այդ մասին մայրաքաղաքի կառավարության նիստում հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն:

- Հունվարից կներդրենք նորույթը՝ բաժանորդային համակարգը: Այս մասին հանրությանը տեղեկատվություն կտրամադրենք քիչ ուշ: Կգործի նաեւ ինտեգրված սակագին: Գիտեք, որ մետրոյի տոմս գնելիս՝ մարդիկ հնարավորություն ունեն մեկուկես ժամ առանց վճարի օգտվել ավտոբուսից, միկրոավտոբուսից: Դա ընթացիկ տվյալներով չի վերաբերում դեղին երթուղայիններին, սակայն հաջորդ տարվանից այն ամբողջությամբ կկարգավորվի, եւ ամբողջ հասարակական տրանսպորտը կկարողանա օգտվել այդ ինտեգրված սակագներից,- ասաց Կախա Կալաձեն:

էլը պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱԶԵՆ

ԳՆԱՍ ԲԱՐՈՎ, ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՀԱՅԵԼ Է ԷԴՈՒԱՐԳ ԳԱՄՊԱՐՈՎԸ, ՀԻԱՆԱԼԻ ԼՐԱԳՐՈՂ, ՔԱՂԱՔԱՅԻ

մանակ լայն ժողովրդականություն վայելող «Մուղոյոժ Գրուզիի» թերթում, տաղանդավոր լրագրողների եւ հայրենասերների շրջապատում:

Հետագայում նրա գործունեության գլխավոր փուլը կապված էր պետական տեղեկատվական գործակալության «ՎրացիՆՖՈՐՄ» աշխատանքի հետ, լինելով Վրաստանի երկրորդ նախագահ Էդուարդ Շենարդանի վստահությունը վայելող լրագրողներից մեկը, նա երկար տարիներ մասնակցել է անկախ Վրաստանի զարգացման գլխավոր վեկտորների որոշիչ, քաղաքական եւ սոցիալ-տնտեսական փո-

փոխությունների աջակցությանն ուղղված քաղաքականության տեղեկատվության ձեւավորմանը: Վրաստանի տարբեր շրջաններից եւ արտասահմանյան շատ երկրներից տրված Էդուարդ Գասպարովի ռեպորտաժները մեծապես նպաստել են ոչ միայն օբյեկտիվ տեղեկատվության փոխանցմանը, այլեւ ստեղծել ժողովրդավարության եւ տնտեսական բարեփոխումների իրականացմանն ուղղված համընդհանուր մթնոլորտ:

Մեզանից շատերի համար նա պարզապես Էդիկ էր, հավատարիմ ու կարեկից բարեկամ: Մենք միասին անցել ենք

մեր հասունացման ու կազմավորման ճանապարհով, ձեռք բերել կենսափորձ եւ մասնագիտական հասունություն՝ շնորհիվ անշահավետ փոխաջակցության: Հետեւաբար անհնար է հաշտվել այն մտքի հետ, որ քո կողքին այլևս չի գտնվի մեկը, ով հայացքով, խոսքով, վճռական գործերով միշտ պատրաստակամություն է հայտնել ամենադժվարին պահերին քեզ աջակցելու համար: Ուստի, որքան էլ ցավալի լինի այսօր, ստիպված ենք ասել. «Գնաս բարով, թանկագին բարեկամ...»:

Սի խումբ ընկերներ